ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուղերձներ երեխաներին
խնամակալության ոլորտում

www.coe.int/children

ԿԱՌՈՒՑԵԼՈՎ ԵՎՐՈՊԱ՝
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուղերձներ երեխաներին
խնամակալության ոլորտում

Եվրոպայի խորհուրդ

ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՊԱՏՐԱՍՏԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

ԻՆՉՈՒ՞...

քանի որ Եվրոպայի խորհուրդը ցանկանում է, որ երեխաները հասկանան, թե ինչպես կարող են օգտվել իրենց իրավունքներից՝ խնամակալության ներքո:

Եվրոպայի խորհուրդը 46 երկրից բաղկացած միություն է, որը համատեղ աշխատում է խաղաղության և մարդու իրավունքների պաշտպանության համար: Այն օգնում է երկրներին պաշտպանել երեխաների իրավունքները՝ ձեր իրավունքները:

Այս գրքույկը քեզ կօգնի հասկանալ՝

- ով է խնամակալը,
- ինչ իրավունքներ ունես դու խնամակալության ներքո,
- ինչպես կարող ես մասնակցել որոշումների կայացմանը և արտահայտել քո կարծիքը:

ԻՆՉ Է ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Երբեմն կյանքում լինում են դժվար պահեր՝ պատերազմ, վտանգավոր իրավիճակներ կամ տեղափոխություն ուրիշ երկիր, այսինքն՝ *միգրացիա:*
Կարող են լինել դեպքեր, երբ ծնողներդ կողքիդ չեն, իսկ դու գտնվում ես նոր ու անծանոթ միջավայրում:

Հիշիր՝ *դու միայնակ չես:*
Քո իրավունքները միշտ քեզ հետ են և պաշտպանում են քեզ ամենուր՝ որտեղ էլ լինես:

Քեզ չեն կարող փակ պահել միայն այն պատճառով, որ դու մենակ ես ճանապարհորդում, հեռու ես ընտանիքից կամ չունես փաստաթղթեր:

Դու ազատ լինելու իրավունք ունես
Եթե քեզ փակ են պահում ինչ-որ վայրում՝

- դա պետք է լինի շատ կարճ ժամանակով,
- դու պետք է իմանաս՝ ինչո՞ւ ես այդտեղ:

Այսպիսի դեպքերում պետությունը նշանակում է հոգատար մեծահասակ, ով կօգնի ու կպաշտպանի քեզ:
Այդ մեծահասակը կոչվում է խնամակալ:

Իրավունք, անվտանգություն և հարգանք

Որ երկրում էլ որ լինես՝ ոչ ոք իրավունք չունի քեզ վատ վերաբերվելու կամ վիրավորելու:

Դու արժանի ես՝

- բարի և հոգատար վերաբերմունքի,
- ապահով ու ջերմ միջավայրի,
- հարգանքի՝ անկախ նրանից, թե որտեղից ես եկել:

Ոչ ոք չի կարող սահմանափակել քո իրավունքներն առանց հիմնավորման: Քո խնամակալը կողքիդ է, որ դու լինես ապահով, պաշտպանված և վստահ:

Ո՞ՐՆ Է ԽՆԱՄԱԿԱԼԻ ԴԵՐԸ

Խնամակալը կարևոր դեր ունի. նա քո կողքին է, երբ ծնողները չեն կարող այդ անել: Նրա օգնությամբ դու կարող ես քեզ զգալ պաշտպանված ու վստահ:

ԽՆԱՄԱԿԱԼԸ՝

- **օգնում է, որ քո ամենօրյա կարիքները՝ սնունդը, հագուստը, ուսումը, ապահովված լինեն,**
- **աջակցում է դպրոցում և ուսման հարցերում,**
- **հետևում է, որ ունենաս ապահով ապրելու պայմաններ,**
- **լսում է քեզ և խրախուսում արտահայտել քո կարծիքը:**

Խնամակալը քո ուղեկիցն է դժվար ճանապարհին. նա օգնում է քեզ հասկանալու և պաշտպանելու քո *իրավունքները:*

ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՍ ԴՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Դու իրավունք ունես.

- ապրել անվտանգ բնակավայրում
- ստանալ կրթություն
- օգտվել առողջապահական ծառայություններից
- պահպանել կապը ընտանիքի անդամների հետ (եթե դա անվտանգ է)
- կայացնել որոշումներ
- ունենալ սեփական կարծիք, լսելի լինել և
- արտահայտել քո կարծիքը:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՍ ԱՐՏԱՀԱՅՏԵԼ ՔՈ ԿԱՐԾԻՔԸ

Երբ խոսքը վերաբերում է քեզ՝ քո կրթությանը, խնամքին, առողջությանը կամ ապագային, դու իրավունք ունես արտահայտել քո կարծիքը:

Դու կարող ես.

- խոսել անձամբ
- գրել նամակ/դիմում
- ներկայացնել կարծիքդ տեսագրությամբ
- դիմել խնամակալի, հոգեբանի կամ սոցիալական աշխատողի

Քո կողքին են նաև՝ ուսուցիչը, բուժաշխատողը, ոստիկանը, համայնքի աշխատողը, ովքեր պատրաստ են քեզ աջակցել ու պաշտպանել:

ԻՆՉՈՒ՞ Է ՔՈ ԿԱՐԾԻՔԸ ԿԱՐԵՎՈՐ

...որովհետև որոշումները վերաբերում են **քո կյանքին:**

Մեծահասակները՝ պետության, դպրոցի կամ խնամակալության ներկայացուցիչները, պարտավոր են.

- լսել քեզ,
- հաշվի առնել քո կարծիքը,
- բացատրել որոշումները՝ հասկանալի և ընկալելի ձևով:

Օրենքը պահանջում է, որ քեզ հարցնեն և լրջորեն վերաբերվեն քո կարծիքին:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՍ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ

Մասնակցությունը քո իրավունքներից է:
Կան **9 հիմնական սկզբունքներ՝** պաշտպանելու քո մասնակցության իրավունքը.

Սկզբունք	Ի՞նչ է նշանակում
Թափանցիկ	Քեզ բացատրում են, թե ինչ է քննարկվում ու ինչու
Կամավոր	Ոչ ոք չի կարող ստիպել քեզ խոսել
Հարգալից	Քեզ լուրջ են ընդունում/վերաբերվում
Տարիքին համապատասխան	Քեզ համար ընկալելի լեզվով են խոսում
Երեխայակենտրոն	Քո կարիքներն առաջնային են
Ներառական	Քեզ չեն տարբերում կամ անտեսում
Աջակցող	Մասնագետները կողքիդ են
Անվտանգ	Չես վախենում կամ անհարմար զգում
Հաշվետու	Տեղեկացնում են, թե ինչ քայլեր են ձեռնարկել՝ հաշվի առնելով քո կարծիքը:

ԻՆՉՈՒ՞ Է ԿԱՐԵՎՈՐ, ՈՐ ԴՈՒ ՄԱՍՆԱԿՑԵՍ

Երբ դու մասնակցում ես՝

- **Քո լավագույն շահի մասին որոշումներն ավելի ճիշտ են կայացվում**
- **Մեծահասակները հասկանում են՝ ինչ է իրականում քեզ անհրաժեշտ**
- **Դու քեզ զգում ես ուժեղ և պատասխանատու**

Քո ձայնը շատ բան կարող է փոխել:

ԻՍԿ Ո՞ՐՆ Է «ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԸ»

Դա այն է, երբ

- Որոշումը պիտի օգնի քեզ **զգալ անվտանգ, զարգանալ և ապրել բարեկեցիկ կյանքով**
- Ոչ մեկի նպատակները չպետք է լինեն առավել կարևոր, քան **քո բարեկեցությունը:**

Պետությունը պետք է ապահովի քո լավագույն շահը՝ պահպանելով քո անվտանգությունն ու իրավունքները, ներառյալ միգրացիայի ժամանակ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար:

ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ, ԵԹԵ ՈՐՈՇՈՒՄՆ ԻՆՁ ՉԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ

Այո:
Եթե քո մասին կայացրած որոշումը քեզ չի գոհացնում, ապա դու իրավունք ունես.

- նորից քննարկել որոշումը
- պահանջել բացատրություն
- դիմել պատասխանատուներին և ստանալ պաշտպանություն

ՈՐԵՎԷ ԲՈՂՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ՎՆԱՍԵԼ ՔԵԶ ԿԱՄ ՓՈԽԵԼ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՔՈ ՆԿԱՏՄԱՄԲ:

ՈՎՔԵՐ ԵՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԼՍԵԼ ՔԵԶ

- Խնամակալը
- Դատարանը
- Դպրոցը
- Բժիշկը
- Սոցիալական աշխատողները
- Որոշ դեպքերում՝ ոստիկանությունը

Պետությունը պետք է հետևի, որ. խնամակալը կատարի պարտականությունները, որ ոչ մի երեխա չմնա առանց ուշադրության:

ՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ

Եթե ինչ-որ բան քեզ անհանգստացնում է կամ քո նկատմամբ անարդար են վերաբերվում կամ քեզ ապահով չես զգում, հիշիր՝ դու միայնակ չես:

- Խոսիր քո խնամակալի կամ խնամատարի հետ,
- դպրոցի հոգեբանի կամ ուսուցչի հետ,
- համայնքի սոցիալական աշխատողի հետ,
- գրիր կամ զանգիր վստահության հեռախոսահամարներին:

Թեժ գծերը

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	114
Ոստիկանություն	102
Հիվանդանոց/Շտապօգնություն	103
Հրշեջ ծառայություն	101
Փրկարար ծառայություն	911
Մարդու իրավունքների պաշտպան	116 կամ 096 116 100 (WhatsApp/Viber)

ԱՄԵՆ ՀԱՐՑ ԿԱՐԵԼԻ Է ԼՈՒԾԵԼ, ԵՐԲ ԴՈՒ ԽՈՍՈՒՄ ԵՍ: ՔՈ ՁԱՅՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է:

ՎԵՐՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր երեխա արժանի է սիրո, հոգատարության և պաշտպանված կյանքի:
Խնամակալությունը հենց դրա համար է ստեղծված՝ օգնելու, որ դու ապրես ապահով, վստահ ու երջանիկ կյանքով:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE